

մանակակից հայ կաթողիկեայ մէկ քանի ան-
ձանց եւ դիպաց վրայ աւանդուած եւ մանաւանդ
անձանթ մնացած տեղեկութիւններն ամփոփել
ուզած եմ. որոնցմէ դեռ շատ ունիմ, թողած
ուրիշ ժամանակի վերաբերեալ գործերու մէջ
աւանդուելի:

Կենսագիր Նուրտինեան Յ. Վ. իր մասին
մանրամասն տեղեկութիւն կու տայ իր այս գոր-
ծին մէջ՝ «Երգ առանձին» բաժնով, զորոնք
այստեղ կը համառօտեմ:

Յովհ. Վ. Նուրտինեան ծնած է 1747ին
Տիգրանակերտ, հայրն էր Սահակ Քօսեանց,
մայրը Մարթա՝ ծնեալ Նուրտինեան, որոնք
իրենց ծննդավայր Բաղիշէն գաղթած էին՝ Կոր-
դուաց (Քիւրտերու) երեսէն փախչելով: Ծնողքն
հարուստ եւ բարեհամբաւ էին: Յովհաննէս
եօթնամսեայ էր երբ մայրը վախճանեցաւ. իսկ
հայրը վախճանեցաւ իբր 1755ին, որ դաւա-
նութեամբ ուղղափառ կաթողիկեայ էր, բայց
նեղւաց վախէն ծածուկ կը պահէր:

Յովհաննիսի մօր Մարթայի հայրը՝ Յա-
կոբ Նուրտինեան քահանայ էր, եւ իր դեռատի
կնոջ մահուանէն ետեւ, Բաղիշու խոյութեան
ժամանակ, իր Աբրահամ որդւոյն հետ Ամրդօ-
լու Ս. Յովհաննու վանքն առանձնացաւ: Հոն
թէ ինքն եւ թէ որդին ուսում առնելէն ետեւ՝
միասին վարդապետական կարգ, գաւազան եւ
վեղար առին: Յետոյ երկուքը Էջմիածին ուխտի
գացին, եւ միասին նուիրակ զրկուեցան Աղուա-
նից աշխարհը: Սոյն պաշտօնը լաւ կատարեցին,